



## ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու եւ, նույնհետայն, իր երկրի դեսպանատունը այնտեղ փոխադրելու Մ. Նահանգների նախագահի որոշումը, ինչպես սպասվում էր, ծայրահեղ լարվածության մատնեց ողջ տարածաշրջանը, որն արդեն վերջին տասնամյակում գտնվում է անօրինակ խռովահույզ վիճակում եւ դարձել է արյունալի բախումների, քանդումների ու բռնագաղթների թատերաբեմ: Դոնալդ Թրամփի այդ որոշումը այժմ սպառնում է նոր արյունահեղություններ, նոր տառապանքներ բերել տարածաշրջանի ազգաբնակչություններին, որոնցից գերծ չեն մնալու նաեւ Միջին Արեւելքի հայազաղութները:

Մեր կարծիքով, սպառնալիք է կախված նաեւ Հայկական Երուսաղեմի գլխին, ոչ միայն տեղի արդեն խիստ նոսրացած մեր գաղթօջախի, այլ մանավանդ Հայոց պատրիարքության, Սուրբ քաղաքում նրա դարավոր ներկայության, նրա նյութական ու հոգեւոր անգնահատելի հարստությունների գլխին: Նախագահ Թրամփի որոշումը, դրան հետեւելիք իսրայելական իշխանությունների <<կարգադրությունները>> սպառնում են խախտել փխրուն հավասարակշռությունը, որ գոյություն ունի Հին Երուսաղեմի միջկրոնական եւ ազգամիջյան համագոյակեցության ասպարեզում, խախտելու է դարավոր կարգավիճակները, որոնցից տուժելու է Մր. Հակոբա վանքը, մեր մյուս սրբատեղիները:

Այստեղ ավելորդ ենք համարում վերստին հիշեցնել Հայկական Երուսաղեմի դիրքի կարեւորությունը քրիստոնեական երեք մեծ եկեղեցիների մեջ: Կարեւոր եւ, հետեւաբար, առավել խոցելի՝ նաեւ իր թույլ պաշտպանվածությամբ: Ուստի առավել ենթակա արտաքին ոտնձգությունների, իրավունքների ոտնահարման:

Նկատի ունենալով այս եւ այլ հանգամանքները, Ռամկավար Ազատական կուսակցության Կենտրոնական վարչությունը առաջարկում է Երեւանում ստեղծել արտակարգ լիազորություններով օժտված պետական ու կրոնական կենտրոնական շտաբ, պետական ու եկեղեցական ներկայացուցիչների մասնակցությամբ, որը կհամակարգի արտաքին ու ներքին բոլոր աշխատանքները ի խնդիր հայկական Երուսաղեմի, Հայոց պատրիարքության պաշտպանության, իր աշխատանքները համակարգելով առաջին հերթին Հայոց պատրիարքության, հայկական մյուս դավանանքների ղեկավարություններին, ինչպես նաև քրիստոնեական բոլոր եկեղեցիների ու կենտրոնների, աշխարհի գլխավոր մայրաքաղաքների հետ:

Կենտրոնական վարչություն  
Երեւան, 12 դեկտեմբեր 2017 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒԱԾ ՈՅԺԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 20-ԱՄԵԱԿ

Դեկտեմբեր 8-ին Գ. Սունդուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոնին մեջ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Օայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցութեան ՀՀ Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի, տեղի ունեցաւ ՀՀ Զինուած ոյժերու Հոգեւոր առաջնորդութեան հիմնադրման 20-ամեակին նուիրուած տօնական հանդիսութիւնը:

Շնորհաւորելով ներկաները Հոգեւոր առաջնորդութեան գործունէութեան 20-ամեակին առիթով Հայաստանի Զինուած ոյժերու հոգեւոր առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեան իր ողջոյնի խօսքին մեջ մասնաւորաբար շեշտեց. «...Այսօր, փառք Աստուծոյ, ունինք պետականութիւն, յաղթանակած բանակ, իսկ ամենակարեւորը՝ հաւատքի ու գաղափարի հերոս զինուոր, որուն ապացոյցը ունեցանք անցեալ տարի՝ Ապրիլին: Այսօր հպարտօրէն կրնանք ըսել, որ հերոսութիւնը հայ զինուորի արեան ու զիտակցութեան մեջ է, զինուոր, որ զենքը ձեռքին, աղօթքը շուրթերուն, կը պաշտպանէ իր բարոյական իրաւունքը:

Վրթանէս Սրբազան իր խօսքին մեջ նշեց նաեւ, որ Զինուորական Ոյժերու Հոգեւոր առաջնորդութեան գործունէութեան նպատակներէն է հայ զինուորը եւ սպան աննկուն տեսնել, հոգեպէս հաստատակամ ու կայուն, իսկ Հայրենիքը՝ պաշտպանուած ու զօրեղ:

Վրթանէս Սրբազանն աղօթքով յիշեց երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետն ու լուսահոգի սպարապետ Վազգէն Սարգսեանը, որոնց նախաձեռնութեամբ 1997-ին սկիզբ դրուեցաւ Զինուած Ոյժերու հոգեւոր ծառայութեան գործընթացին: Սրբազան Հայրը նաեւ իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութիւն Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին Հայոց բանակի եւ Հոգեւոր առաջնորդութեան նկատմամբ անոր ցուցաբերած հայրական խնամքին համար:

Այնուհետեւ Նորին Սրբութիւն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսութեան մասնակիցներուն իր պատգամն ու օրհնութիւնը բերաւ:

Փառք եւ գոհութիւն ենք մատուցում Աստուծուն, որ անսասան եւ յաղթական է Հայոց բանակը, որն այսօր յուսալի գրաւականն է մեր ժողովրդի ապահով, խաղաղ ու ստեղծագործ կեանքի:

Մեր բանակը ձեւաւորուեց անկախ պետականութեան հաստատման եւ Արցախի ազատագրութեան հերոսական օրերում եւ կայացաւ ու զօրացաւ մեր պետականութեան ամրապնդման հետ: Մեր ժողովուրդը ամէն դժուարութիւն յանձն առաւ հայրենի հողը պաշտպանելու եւ իր ազատ կեանքը կառուցելու համար: Հայրենիքի պաշտպանութեան նուիրական պայքարում, նաեւ մարտի դաշտում, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին իր զաւակների կողքին էր՝ զօրացնելով նրանց Աստուծոյ խօսքով ու հաւատքով, որն իբրեւ հոգեւոր սուսեր՝ բարձրանում է ընդդէմ բռնութեան, կեղծիքի, իրաւունքի ոտնահարման եւ ամէն չարիքի:

Թող խաղաղութիւնը ամուր ու հաստատուն լինի հայրենի մեր սահմաններում: Թող Երկնաւոր Տէրը պահպանի մեր ժողովրդին եւ բզօրացնի ու բարօր դարձնի հայրենի մեր երկիրը: Թող արգասաբեր ու պտղաբեր լինի մեր Եկեղեցու առաքելութիւնը՝ ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն ազգիս:

Պաշտպանութեան նախարարը անդրադարձ կատարեց Հայոց Եկեղեցիի ունեցած կարեւոր առաքելութեան ազգային կեանքի մեջգ ...Մենք 26 տարի առաջ սկսեցինք կերտել պետականութիւն մի իրականութեան մեջ, որտեղ ունեինք մշակոյթ, լեզու, գիտութիւն, որ կտոր-կտոր հաւաքել էինք աշխահով սփռուած մեր Սփիւռքից՝ որպէս Ցեղասպանութեան հետեւանք:

Պրն. Վիգէն Սարգսեան յիշեց հայ հոգեւորականներու նուիրական անուններ, որոնք հայոց պատմութեան ամենաձանր պահերուն զօրականներուն հետ մարտնչած են մարտի դաշտին վրայ: Խօսելով մեր օրերու Զինուած ոյժերու Հոգեւոր առաջնորդութեան առաքելութեան մասին՝ Հայաստանի Պաշտպանութեան նախարարը մասնաւորապէս նշեց. Դա այն ոյժն է, որը պէտք է մեր բանակը դարձնի իւրայատուկ, դա այն ոյժն է, որը պէտք է ազգային ոգի եւ նոր միջավայր ձեւաւորելու կարեւոր միջոց դառնայ մեր զօրքին: Այսօր գնդերեցները մեր զինուած ուժերում ե՞ւ աւագ ընկեր են, ե՞ւ հոգեբան, ե՞ւ այն կարեւոր հոգեւոր ուղղորդիչը, որին հաւասարում են մեր զինուորները:

### Հայ Չայնր մեկ տարեկան է. անաչառության և միավորման ճանապարհով...



Այսօր իր փոքրիկ հորեղան է նշում Հայ Չայնր պարբերականը: Անցած մեկ տարվա ընթացքում թերթը հասցրել է վստահ քայլերով մուտք գործել հայկական էլեկտրոնային մամուլի համերաշխ ընտանիք: Ավելին, առանց չափազանցելու կարող եմ ասել, որ Հայ Չայնր իր ուրույն տեղն է գտել այդ ընտանիքում՝ շնորհիվ խմբագրակազմի և թերթի համակարգող խորհրդի կողմից որդեգրած հավասարակշռված, հիմնավորված քաղաքականության, ներկայացվող նյութերի ճշգրտության, կատարվող վերլուծությունների բազմակողմանիության և անաչառության, լրագրողական էթիկայի և կոռեկտության: Վստահ եմ, որ հատկապես այս որակների համար թերթը սկսեց վայելել ընթերցողի սերն ու հարգանքը:

Առաջարկում եմ փոքրիկ շրջանց կատարել թերթի խորագրերով:

Հայաշխարհի ձայն խորագիրն, ամբողջությամբ համապատասխանելով իր վերնագրին, ամենաբազմազան նյութեր է ներկայացնում ինչպես մայր հայրենիքից Հայաստանից, այնպես էլ Արցախ աշխարհից, պոլսահայության կյանքից, Սփյուռքի ազդեցիկ այլ գաղթօջախներից: Ներքին և արտաքին քաղաքական պաշտոնական քրոնիկոն, Հայաստանյան և Սփյուռքյան եկեղեցական կյանքի անցուդարձ, հետաքրքրաշարժ իրադարձություններ, մարզական ձեռքբերումներ: Առանձնակի սիրով և հպարտությամբ են լուսաբանվում Միսիթարյան Միաբանության 300 – ամյակին նվիրված նյութերը՝ ամեն անգամ զարմացնելով նյութի նարկայացման թարմությամբ և պատմական փաստերի նկատմամբ հոգատար վերաբերմունքով:

Հանդիսանալով Ռամկավար Ազատական կուսակցության խոսափողներից մեկը՝ Հայ Չայնր, բնականաբար, մշտապես լուսաբանում է կուսակցական կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները, իսկ նյութերի ընթերցումների քանակը վկայում է, որ մեզանում նման պահանջարկ, հիրավի կա: Մեր ձայնը խորագիրը ներկայացնում է տեղական կառույցների աշխատանքը: Մշտապես հետաքրքիր է ընթերցել նաև Թեքեան Մշակութային Միության գործունեությունը լուսաբանող տեղեկատվությունը, մասնավորապես տեղեկանալ Կենտրոնի 70 – ամյակին նվիրված բազմապիսի միջոցառումներին:

Աշխարհի ձայն խորագրի ներքո գետեղվող տեղեկատվությունը նույնպես թարմ է, ծավալուն և բովանդակալից: Առավել մեծ հետաքրքրություն են վայելում լուրերը հայաշատ համայնքներից:

Հետաքրքրություն են վայելում նաև Հոդվածներ բաժնի նյութերը: Սովորաբար դրանք վերաբերում են ամենավերջին իրադարձություններին, որոնք մեծ հասարակական արձագանք են գտել և կարոտ են ոչ այնքան լուսաբանման, որքան մասնագիտական վերլուծության:

Գրեթե յուրաքանչյուր օր Հայ Չայնր տպագրում է հետաքրքիր հարցազրույցներ: Անկախ նրանից, դա թերթին տված էքսկլյուզիվ հարցազրույց է, թե այլ պարբերականներից մեջբերված, նման նյութերը կարդացվում են մեկ շնչով և մեծ հետաքրքրությամբ:

Պարբերաբար թարմացվում է նաև Հայ Չայնրի տեսա և ֆոտոդարանը:

Չեմ կարող չնշել նաև մի հանգամանքի մասին, որը բնորոշ է հասուն, հավակնոտ և հեղինակավոր կայքերին: Շատ բարձր մակարդակի վրա է նաև կայքի ռուսերեն լեզվով տարբերակը՝ անընդհատ թարմացվող, ռուս քաղաքական և հասարակական գործիչների հետ հրատապ հարցազրույցներով համեմված: Անշուշտ, այս առումով հետ չի մնում նաև անգլալեզու տարբերակը:

Թերևս այսքանը...բարի տարեդարձ քեզ, ընթերցողի լավ բարեկամը դարձած Հայ Չայնր, առանց որի շատերիս համար արդեն չի կարող ամբողջական լինել օրվա իրադարձությունների ներկայակալը:

Շարունակիր գուրկ մնալ էժանագին սենսացիաներից և ընթանալ քո կողմից որդեգրած միակ ճիշտ՝ անաչառ, ճշմարիտ ու ամենակարևորը՝ կառուցողական և ազգը միավորող ուղով՝ ի տարբերություն շատ – շատերի:

### Հայկարամ Նահապետեանի Ուաշինգթոնեան Գրառումներէն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՂՐԱՄԵԱՆ



Յովհաննէս Բաղրամեանի մականունը՝ Հայրիկ էր իր հոգատարութեան համար, պատերազմում զինուորին անհիմաստ մտադաց չսարքելու, փոխարէնը մանրակրկիտ հաշուարկներով զինուորի կեանքը խնայելու, բնաւորութեան խաղաղ, հանդարտ գծերի համար:

Բայց այս որակների կողքին նա կարող էր լինել շատ պինդ, շատ անզիջում, մինչև վերջ պայքարող մարդ:

1943 թուականի գարնանը նախատարաստում էր Կուրսկի աղեղի չափսերով աննախադէպ ճակատամարտը՝ սովետական եօթ ռազմաճակատներու զօրք էր կռուելու այստեղ: Վերեներում այդ ծաւալի գործողութիւնը մշակելիս՝ բացթողումն էր էին արել, որոնցից մէկը նկատեց Բաղրամեանը: Նախ գնաց իր անմիջական ղեկավար Սոկոլովսկու մօտ, բացատրեց, բայց բան դուրս չեկաւ: Գնաց գեներալ Ռէյտերի մօտ, էլի բացատրեց, նորից անհիմաստ:

Սոկոլուայում խօսեց գեներալ Անտոնովի հետ, թէ՛ սխալ հաշուարկներ էք արել, կողքից Ռէյտերն ասաց՝ ռիսկը միշտ էլ կայ, հերիք է բողոքես: Բայց ռիսկը անմտածուած պէտք է չլինի, պատասխանեց այն ժամանակ գեներալ Բաղրամեանը:

Վերջը Ստալինի մօտ աւարտական քննարկմանը հարցը բարձրացրեց. Թոնելով Սոկոլովսկիների ու Ռէյտերների վրայով, ուղղակի գերագոյնին ասաց. Նախատեսել էք, որ ես գնամ հարաւ, Ռոկոսոլվսկու զօրքերին ընդառաջ՝ թիկունքումս թողնելով հսկայական գերմանական զօրք: Նախ՝ Ռոկոսոլվսկին դժուար իմ հետ հաւասար հանդիպման վայր հասնի, երկրորդ՝ թիկունքից ու կողքերից գերմանացիք կը խփեն, բանակս կը ջարդեն: Պէտք է էսպէս-էսպէս անենք փոխարէնը ...:

Գեներալները յարձակուեցին Բաղրամեանի վրայ, թէ՛ հերիք է, անընդհատ ուզում ես քո գործը հեշտացնես մեր հաշուին: Ստալինը մտածեց ու ասաց յայտնի նախադասութիւնը. Բայց Բաղրամեանը գործ է առնում:

Ինչքան մարդկային, շատ անգամ ռոմանտիկ ու փափուկ որակներն էին բնորոշ ապագայ մարշալին, նոյնքան էլ ճիշդ լինելու դէպքում, մինչև ամենավերջին կէտը ռիսկով պայքարելը:

Լուսանկար գանատահայ լուսանկարիչ՝ Քավուքի

### Տիգրան Մանսուրեան Դարձած է «Համագործակցութեան Աստղ»ի Դափնէկիր

Երգահան Տիգրան Մանսուրեան ԱՊՀ երկիրներու մշակոյթի, գիտութեան եւ կրթութեան այլ գործիչներուն մէջ դարձած է «Համագործակցութեան աստղ»ի դափնէկիր:



Պարգևներու յանձնման հանդիսաւոր արարողութիւնը Դեկտեմբեր 11-ին կայացած է ԱՊՀ-ի մասնակից պետութիւններու ստեղծագործական ու գիտական մտաւորականութեան՝ Մոսկուայի մէջ ընթացող համաժողովի ընթացքին:

«Համագործակցութեան աստղ» մրցանակը 2009 թուականէն աւանդաբար կը շնորհուի արուեստի, գիտութեան եւ կրթութեան բնագաւառի մէջ նշանակալի ձեռքբերումներու համար: Անոր հիմնադիրներն են՝ Մարդասիրական համագործակցութեան խորհուրդը եւ ԱՊՀ-ի մասնակից պետութիւններու մարդասիրական համագործակցութեան միջպետական հիմնադրամը: Պարգևի դրամական մասը կը կազմէ 2 միլիոն ռուբլի:

# ՄԱՐԴՆ ԱՊՐՈՒՄ Է ԱՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ ՆՐԱՆ ՅԻՇՈՒՄ ԵՆ

ՍՈՆԱ ՏԻԳՐԱՆԵԱՆ



## ՅԻՇԵԼՈՎ ՎԱՐՂԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԸ

Ստորև հրատարակուող գրության մեջ խոհական-բանաստեղծական տողերուն հեղինակը գրող Վարդգես Պետրոսեանի կինն է: Յուզիչ են տողերը եւ առաւել իմաստալի՝ տողատակի ակնարկութիւնները:

Գրող, հրապարակագիր, քաղաքական գործիչ Վարդգես Պետրոսեանը սովետական շրջանի փակ ընկերութեան մեջ բաց ապրեցաւ՝ իր գրականութեամբ ու կենցաղով: Մտածումի եւ արտայայտութեան սահմանները խորտակող համարձակութեամբ նոր բնութագրումներ ընծայեց

մեզ ազգովին չարչարող հարց երուն: Հայերթորք յարաբերութեանց զարմանալի բնութագրում մը տուաւ՝ հարցնելով - Ի՞նչ չծնուած որդին, ու թորքի չծնուած որդին յաւիտեանս թշնամի-սյիտի լինեն իրար (մտաւոր վերարտադրութեամբ): Նոյնպէս բազում հարցականներ հրապարակեց, որոնց պատասխանները պիտի գան տալու վաղուան սերունդները: Այսպէս էր Վարդգէսը՝ իր ժամանակէն առաջ՝ ժամանակի վրայ տարածուող:

Իր բաց կեանքին մեջ միակ փակ գաղտնիքը որ մնաց իր խորհրդաւոր մահուան պարագան էր: Ոչ ոք տեղաւորեց այդ միակ կապարը անոր պայծառ ճակատին: Ողջ է այն ապիրատը եւ դեռ իրաւունք ունի՞ս որք մնալու, երբ այնքան գրական երկեր՝ որ աշխարհ պիտի գային՝ գացին Վարդգէսին հետ թաղուելու իր հայրենի գիւղը՝ Աշտարակի հողին մէջ:

Խորհրդային Հայաստանի սիրուած տղան էր որ դեռ տալիք ուներ անկախ Հայաստանին: Անոնք որ կը կարծէին Վարդգէսի պատուանդանը քաղաքական յենակներու էր կրթնած՝ տեսան թէ ան անկախ Հայաստանի մէջ ալ ընտրուեցաւ պատգամաւոր Ազգային Ժողովին, իբրեւ ռամկավար ազատական:

Խանդավառութեամբ կը պատրաստուէր գրական-հասարակական հանդէս մը հրատարակելու, իր շուրջը հաւաքելով Հայաստանի եւ սփիւռքի հեղինակութիւն վայելող գրիչները. իր ջղուտ ու մագնիսացնող անհատականութիւնը այնպիսին էր որ իսկապէս պիտի կրնար հրապարակել այդ հեղինակութիւնները իր անձին ու իր հանդէսին շուրջ:

Երբ Սոնան կը գրէ հետեւեալ տողերը, ալ կը պարտադրուիք բանալու փակագիծները - Մի թիզ քարքարոտ հողն էլ, հայոց մեծերի Պանթէնում, ոմանք շատ համարեցին քեզ համար: Մենք քեզ պահ տուեցինք քո ծննդավայր Աշտարակում: Պանթէնում մեր մեծերն այսօր նեղուած շփոթած են իրենց որոշ անհասկնալի հարեւանների ներկայութիւնից:

Կուսիտասի Պանթէնը սահմանուած պէտք էր ըլլար յաւերժի ճամբորդներուն. սակայն, բնական է որ այսօր Պանթէնի բնակիչները նեղուած ու շփոթած ըլլան իրենց հարեւաններից, երբ այդ հարեւաններից մէկը նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարեանն է, հայրը Երեւանի այժմու քաղաքապետին՝ Տարոն Մարգարեանի. իսկապէս սիրուած ու յարգուած քաղաքական գործիչ մը որուն մեծափարթամ մարմարեայ դամբանը իսկապէս շփոթումի կը մատնէ Կուսիտասը, Խաչատուրեանն ու Մարդեանը: Քաղաքապետը՝ ինքը պէտք էր չափի զգացումը ունենար չթոյլատրելու այդպիսի համեմատութեամբ դամբանի մը մէջ հանգչին իր հոր աճիւնները: Իսկ դեռ անօթի զգացում մը կայ որ հանձարեղ Աճառեանի դամբանը կողոպտուի Թոխմախի գերեզմանին մէջ, մինչ հսկայ տարածք մը գրաւած ըլլայ քաղաքապետին հայրը Պանթէնին մէջ, առանց զգաստանալու պատմութեան վճիռէն:

Կը հասկնանք որ հայաստանցիներուն համար շատ զգայուն հարց է ծնող ազգ գերեզմանին մասին խօսիլը: Երբ խօսքը յաւերժի մասին է՝ ժամանակաւոր քաղաքական հաշիւները պէտք չէ տեղ գրաւեն որոշումներու մէջ:

Երբ Անդրանիկ Մարգարեան այնքան հսկայ տարածք կը գրաւէ Պանթէնին մէջ, բնական է որ Վարդգէսին վտիտ մարմինը չտեղաւորուի այնտեղ եւ քարտուի մինչեւ Աշտարակ:

Վարդգէս Պետրոսեան լուսաշաւիղ մըն էր հայ աշխարհի երկնակամարին վրայ: Լոյսը չի թաղուիր հողին տակ, Պանթէնէն ներս թէ՛ դուրս:

ԽՍԲ. ՊԱՅՔԱՆԻ

Առաւել երջանիկ է այն հայը, որ ծնում, ապրում եւ իր մահկանացուն կնքում է հայրենիքում:

Մշեցի եւ դարսեցի պապերիցս ինձ շատ բան է հասել թէ նիւթական, թէ բարոյական իմաստով: Մեր տոհմածառը փարթամ է, առողջ արմատները խորը, ճիւղերը տարածուած աշխարհով մէկ եւ արտադրութիւններից մէկն էլ այն է, որ վաղամեղիկ հարագատի շիրիմին այցելելիս՝ ընտանիքի արագը բարձրաձայն յայտնում է տան

անցուղարձը: Այդ արձագանքը հասնում է տիեզերքի անսահմանութեանը, որտեղ ոչինչ չի կորչում եւ մեր գործերը, լաւ ու վատ՝ ժամանակի մէջ վերադառնում են տաք քամիների հետ, թափում են մեզ վրայ հորդ անձրեւներով:

Վարդգէս, քո շիրիմին վաղուց չեմ այցելել, հեռու եմ, բայց մտովի յաճախ քեզ հետ եմ: Բոլոր ծանր, մղձաւանջային տարիներին միշտ զգացել եմ քո ներկայութիւնը: Քո հովանաւոր, մեղաւոր, մոլորուած, բայց բարի ոգին թեւածում է շուրջս: Օգնում, պահում՝ պահպանում եւ ոյժ է տալիս ինձ, քո զարակներին: Մեզ ծանր է նստում հաւատարմութիւնը անուանող եւ պատուիդ: Բայց՝ այդպիսին ենք մենք արեւմուտք, գեներով:

Քո հայրենակիցները, թէպէտ ուշացումով, բայց ուշքի եկան ու տէր կանգնեցին շիրիմիդ: Մի թիզ քարքարոտ հողն էլ, հայոց մեծերի պանթէնում, ոմանք շատ համարեցին քեզ համար: Մենք քեզ պահ տուեցինք քո ծննդավայր Աշտարակում: Պանթէնում մեր մեծերն այսօր նեղուած, շփոթուած են իրենց որոշ անհասկնալի հարեւանների ներկայութիւնից, սակայն քեզանից չեն նեղանում, հաստատ չեն նեղանում, ընդհակառակը: Բոլորին չէ, որ բախտ է վիճակուում յաւերժօրէն վերադառնալ ծննդավայր՝ ինչպէս քեզ:

Որդիդ, իր ձեռքով ամէն մի օրինաւոր զաւակին վայել՝ յարգարել-սարքել է գերեզմանդ: Սակայն դու հայր լինելուց առաջ եւ յետոյ, գրող ես, եւ հայրենակիցներիդ դրած կարմիր յուշաքարը՝ մենաւոր ընկուզեմու զարդաքանդակով, սկիզբ դրեց քո գրողական յետմահու կեանքին: Վարդգէս, մեր շուրջը հիմա էլ լիքն են անպտուղ, անարժանապատի մարդիկ: Դու դրանց լաւ գիտես: Ոմանք արդէն ոչ եւս են, չկան, ոմանք էլ դեռ ապրում են: Ապրում են իբրեւ թէ: Դու չէիր ցանկանայ այդպէս ապրել, չէիր կարող: Լաւ, կարգին մարդիկ միշտ էլ աւելի շատ են, սակայն բարութիւնը, ինչպէս դու էիր ասում, անպաշտպան է: Մարդիկ կարիք ունեն գործել ոյժի, որ պաշտպան կը կանգնի բարութեանը: Ես էի այն կարծիքին եմ, որ բարութիւնը ամուր արմատներ ունենալուց բացի ամուր մագիլներ պիտի ունենայ, սուր մագիլներ, որ անխնայ արմատախիլ անի այն մոլախոտը, որ խեղդում, սպաննում է ամեն լուսաւորն ու բարին: Ինչեւէ: Չվշտացնեմ քեզ... իբրեւ անվերապահ բարութեան կողմնակից:

Դու, Վարդգէս, ծաղկում ես. դուստրդ՝ Լիլիթը, որդիդ՝ Մեակը, որդուդ որդին՝ Վարդգէսը, որ իսկական Վարդգէս է, հուր-հեր, շիկահեր պապերիս նման եւ Մեակից ու Լիլիթից էլ չարուկ, պատկերացնում էսս... Դու չորս թռո ունես: Ով գիտէ, մինչեւ 90-ամեակդ թերեւս ծոռ էլ կիւնենաս... քո զաւակները, Վարդգէս, որդի Համագասայի, Հայաստանից հեռու են, օտար, բայց ապահով երկրում: Ապահով, չգիտեմ: Կը մտածէիր արդեօք, որ հնարաւոր է այդպիսի բան. չէիր մտածի, երբէք: Որտեւէլ էր քո մարդու, գրողի հեռատեսութիւնը: Ինչո՞ւ չկարողացար հասկանալ, որ ծանր է լինելու մեզ համար առանց քեզ, քեզանից յետոյ:

Ես ստիպուած եմ, դատապարտուած եմ ուժեղ լինել եւ տէր եմ քո անուան ե՛ր լոյսին, եւ ծանրութեանը: Ես իմ խաչը կրում եմ գլուխս բարձր, վստահ եղիր, եւ թուր ու նախատինք, անեծք մեր թշնամիների ամօթահար գլուխներին սերնդէ-սերունդ:

Այսօր մենք սօնում ենք, այո՞, սօնում ենք քո ծննդեան 85- ամեակը՝ միացեալ նահանգներում՝ Լոս-Անձելըսում, հրեշտակների քաղաքում: Այստեղ հանգրուանել են շատերը՝ քո ընկեր- բարեկամներից, որ ժամանակին հայաստանում էին:

Միիւրք... ամէն անգամ տուն՝ Հայաստան եմ վերադառնում բերեբերանս լցուած լացի չափ յուզիչ պատմութիւններով: Յիշողութեանս մոզական ժապաւէնը ձայնագրում է նախադասութիւններ ու խօսքեր, որ գրողի ամենավառ երեւակայութեամբ անգամ անկարելի է յօրինել: Ամէն անգամ հանդիպում եմ զարմանալի մարդկանց:

Քո խօսքերն են, Վարդգէս: Այժմ մենք լրացնում ենք այդ զարմանալի մարդկանց շարքերը՝ սփիւռքում:

Ես չգիտեմ, արդեօք այսօր սփիւռքն է հայրենիք, թէ հայաստանը: Իր էութեամբ, մարդկանցով. շատ-շատ մարդկանցով, որ հայաստանին է վայել... Որ Հայաստանը պիտի շենացնէին, ուր պիտի ծնուէին քո թոռներն ու ծոռները՝ Վարդգէս Պետրոսեան:

Մարդն այո, ապրում է այնքան, որքան նրան յիշում են: Մենք ոչ միայն յիշում ենք, այլ պահում ենք քեզ մեր սիրոյ մէջ եւ այս պատմութիւնն էլ քեզ համար՝ նաեւ մե՞զ համար է: Ապրողներիս: Ես գիտեմ, որ քո ոգին թեւածում է գոհունակութեամբ եւ մէկիկ- մէկիկ բաժանում իր չապրած տարիները բոլոր նրանց, ովքեր գնահատանքով, ափսոսանքով ու սիրով են յիշում քեզ:

Վարդգէս Պետրոսեան, որդի համագասայի, ծնուած Աշտարակում:

Ապրել եւ վերջին հանգրուանը գտնել հայրենի հողում՝ հայ գրողի համար մեծ երջանկութիւն է, հաւատայ: Թող, որ այս աշխարհում ապրող ամէն հայ արժանանայ այդ բախտին: Ապրել, ապրել, ապրել եւ... մեռնել հայրենիքում:

Արեւշատութիւն ապրողներիս եւ փառք՝ յաւերժութեան մէջ հուլացող մեր ՄԵԾԵՐԻՆ:

# ՊԵՏԱԿԱՆԱՍՊԱՆԴ ՆԱԽԾԻՐ, ԱԻԱԳԱՆԻԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ ԵՒ ՔՈՉԱՐԵԱՆԱԿԱՆ... ՀԱՆԴԻՍԱՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՊԱՐՈՅՐ 3. ԱՂՊԱՇԵԱՆ

Ես «սովորութիւն» ըրած էի, ամէն 27 Հոկտեմբեր 1999ին տարեդարձին, ոչ միայն արտայայտուելու, այլեւ ահագանգ հնչեցնելու, թէ այս պետականասպանդ հաստկեկ թղթածրարը ի՞նչ ճակատագիր պիտի ունենայ, ի՞նչ տեղ պիտի գրաւէ եւ ի՞նչ ուղղութիւն պիտի ստանայ նորօրեայ անկախ Հայաստանի պետականութեան օրակարգին վրայ:

18ը տարի անցած է եւ միայն... քար լռութիւն, իշխանական վարչակարգէն մինչեւ սահմանադրական դատարան ու կառավարական կարգավիճակ, լաւագոյն պարագային, բարձրացում Եռաբլուր, ծաղկեպսակի զետեղում եւ յիշատակի մատուցում:

Բայց, կարելի՞ է այդպիսի վերաբերում ունենալ պետական աւագանիի մը նկատմամբ, զայն զգետնելու իր օրէնսդրական սնարին մէջ, զայն անճիտելու իր անկախական օճախին մէջ, զայն գլխատելու իր հարազատ կառոյցին մէջ:

Ոչ միայն կը թուի, այլեւ կը հաստատուի, որ Քոչարեանականներու օրերուն կ'ըլլան այս բոլորը, երբ պետական ամբողջ ղեկավարութիւն մը կը զենուի, կը յօշոտուի, կը ցեղասպանուի, որովհետեւ անիկա կը կոչուէր՝

- Կարէն Դեմիրճեան
- Վազգէն Սարգսեան

Երկու ազգային մեծութիւն եւ անկախութեան առաջնորդներ, որոնք գիտէին, հաւատացած էին, թէ ինչպէս կարելի էր հայրենիք վերակերտել, հայրենիք պահել ու հայրենիք պաշտպանել, իրենց ետեղը անտեսելու եւ անձնականութիւնը մոռնալու գնով, դառնալով հայրենաշունչ, հայրենապաշտ ու հայրենամէտ մեծագոյն հայրենասէրներ:

Ահաւասիկ այս համոզումներն ու հաւատամքները «դուր» չեկան բոլոր անոնց, որոնք փոքրոգիներ էին, մանր խլեակներ ու փոքրածակներ, հետեւապէս, անոնք «արուեստ» ըրին ու ըրած էին զիրենք զերազանցողները շոգիացնելը կամ հաշուեյարդարի ենթարկելը:

Բառեր ծամծմելու ու մատներու ետեւ թաքնուելու կարիք չկայ: Այս սպանողը կը կատարուէր օրուան գործող նախագահ Ռոպերթ Քոչարեանի պաշտօնավարութեան շրջանին, որ, փաստօրէն, կը նկատուէր նաեւ Հայաստանի զինեալ ուժերու զերագոյն հրամանատարը:

Մինչեւ հիմա տակաւին, նուազագոյն նշոյլով իսկ, յայտնի չեղաւ, որ նախճիրին յաջորդող ժամերուն, Պրն. նախագահը ի՞նչ ըսելու (կամ ընելու) գնաց խորհրդարան, ի՞նչ լսեց կամ ի՞նչ փսփսաց կամ փսփսացուեցաւ իրեն, նոյնհետայն, ծամածռական ժպիտով ու հեզամածեւ արտայայտութեամբ, վերադառնալով նախագահական պալատ, արարաշխարհի զարմացկոտ հայեացքներուն տակ տեսակցելու... ամերիկացի բանագնացին հետ, որ այդ օրերուն, չես գիտեր զուգադիպութեամբ (կամ ի՞նչ), զինք կը սպասէր նախագահական գրասենեակին մէջ:

Յետայնու, պատմութիւնը ծանօթ-անծանօթ կամ անծանօթ-ծանօթ վայրէջք մը ապրեցաւ, իսկ մինչեւ օրս, ոճրային այդ գործողութիւնը կը մնայ «փակ թղթապանակ» մը:

Ապշեցուցիչը այն է, որ ո՛չ ոք կը խօսի այս ահաւոր եւ աննախընթաց «աւագանիասպանութեան» մասին: Մեր ակնարկութիւնը կ'երթայ պետական պատկան մարմիններուն, որոնք, նախագահական, կառավարական, խորհրդարանական ու պատգամաւորական լիազօրութիւններով զինուած ու վահանուած, ոչինչ կ'ուզեն տեսնել կամ ոչինչով զբաղիլ այս ազգային-պետական արհաւիրքին մէջ, մինչ ոճրագործները (աւելի ճիշդ՝ ոճրագործապետները) անարգել կը ղեգերին ազատութեան ովասիսներուն եւ անհպելիութեան եղեմներուն մէջ:

Ինքզինք պարտադրող հարցումը կ'առաջադրէ ու կը պարտաւորեցնէ բղաւելու՝

- Այս խաղութիւնը մինչեւ ե՞րբ եւ ո՞ր
- Որո՞ւն քիթին կը խնդան եւ զո՞վ կը խնդացնեն
- Ջանգակը ինչո՞ւ կ'ուշանայ ու կը ձգձուի
- Ո՞վ է պատասխանատուն այս եղեմագործութեան
- Ինչպէ՞ս կ'արդարացուին այս աճապարարութիւնները

Գործող իշխանութիւնները, երկու կամ աւելի յաջորդական պաշտօնաշրջաններէ, փոփոխութիւններէ կամ կրկնութիւններէ ետք, ըսելիք ունի՞ն թէ ոչ եւ կամ՝ հաւատացած են, որ իրենց որդեգրած գործելաձեւերը ժողովրդավարութիւն են... ժողովրդասպանութեամբ:

1999ի «խորհրդարանական սպանդանոց»ը ինչպէ՞ս կարելի է «դարակազետեղման» մէջ պահել կամ այդ տրամաբանութեամբ անոր հետ վերաբերիլ, երբ՝

- Նախագահական համակարգը կը յաւակնի շրջանցել զայն
- Սահմանադրական համակարգը՝ ստուերել
- Դատական համակարգը՝ ապակողմնորոշել
- Քաղաքական համակարգը՝ անտեսել
- Ոճրական համակարգը՝ ուրանալ

Այս է դառն իրականութիւնը, որուն մէջ կը տապալակին ու կը տապալկեցնեն հայ ժողովուրդը, իշխանական ոլորտներուն մէջ յամեցող երէկուան եւ այսօրուան մունետիկները, առանց անդրադառնալու (թերեւս ալ անդրադառնալով), որ պետութիւն կառուցելու ընթացքը այս չէ եւ չի կրնար ըլլալ ասիկա, այնքան ատեն որ՝

- Արդարութիւնը խոցոտուած է
- Յանցագործութիւնը՝ ընդհանրացած
- Կողմնակալութիւնը՝ համատարած
- Կաշառակերութիւնը՝ ընդունուած
- Ազատագործութիւնը՝ բացառուած

Ինչո՞ւ կ'ընենք այս ընդգծումները, իրենց գունագեղութեամբ ու խայտաբղէտութեամբ, իրենց այլազանութեամբ եւ իրողութեամբ, շա՛տ պարզ, ցոյց տալու համար, որ 27 Հոկտեմբեր 1999ը, իր հայասպան կայացումով ու պետականաքանդ կատարողութեամբ, պէտք չէ պահել անորոշութեան եւ անարդարութեան ճիրաններուն մէջ, որովհետեւ՝

- Հայ ժողովուրդը կը հպարտանայ իր անկախութեան ձեռք բերումով.
- Հայ ժողովուրդը կը պաշտպանէ իր պետութեան կայացման վերածնունդը.
- Հայ ժողովուրդը կը զօրակցի իր պետականութեան հզօրութեան.
- Հայ ժողովուրդը կը հաւատայ իր գոյութեան ամրապնդման երաշխիքներուն.
- Հայ ժողովուրդը կ'անսայ իր ազգային կանչի հրամայականներուն.

Եթէ ասոնք են հայ ժողովուրդի հաւատամքի եւ անոր գոյութեան գրաւականները, ինչպէ՞ս կ'ըլլայ որ կը գտնուին վայանուր հայեր, այն ալ պատասխանատու դիրքերու վրայ, որոնք կը պղծեն այդ սրբութիւնները, յանուն իրենց ընչաքաղցութեանց եւ անձնասիրութեանց:

Եթէ չկային (ու չկան) այդպիսի ստրկամիտներ, ապա, ինչպէս կ'ըլլայ որ՝ անկախ Հայաստանի Հանրապետութիւնը գլխատողներ, անոր պետականութիւնը, ազգամեծութիւնն ու ղեկավարութիւնը խողխողող դաւաճաններ, ազատ-համարձակ կեանք կ'ապրին ու կը վայելեն:

Ուղղակի ցնորամտութիւն է ամբողջ «մեղք»ը նետել Նայիրի Հունանեանի նման վիշապագործի մը վրայ, ապա, գոհացումը (՞) ունենալ, որ ամէն ինչ իր տեղը գտած է, յանցաւորները պատժուած, դատավճիռը արձակուած ու...պրծալ:

Այս մտածումն իսկ կրկնակի քրեական յանցագործութիւն-ոճիր է. ինչո՞ւ, պարզապէս անոր համար, որ դատական համակարգը խիստ թերացումի մէջ է (թերեւս ալ կախեալութեան եւ սպառնալիութեան), անընդունելի է անոր կրաւորական վարքագիծը, իսկ անհանդուրժելի՝ անոր կամայականութիւնը:

Ամմեղ, բայց, տեղին հարցում մը. Եթէ օրուան նախագահը՝ Ռոպերթ Քոչարեանը, իր պաշտօնավարութեան շրջանին, կարելի չէր «հարցաքննութեան» կանչել (կը համարձակէի՞նք), բայց, յետ իր նախագահութիւնը՝ ինչո՞ւ լսումներու չենթարկուեցաւ:

Վերջին հաշուով, ոճրագործ ցանցին եւ անոր ոճրապետին հետ տեսակցողը եղած է՝ նոյնիքն Ռ. Քոչարեան:

Դատական իշխանութիւնները, եթէ ունին իրենց մասնագիտական հեղինակութիւնն ու արժանապատուութիւնը, կրնայի՞ն «պահ» մը լսել զինք, իրմէ իմանալ, թէ «բանն ինչու՞ն էր» եւ կամ այդ ի՞նչ գերբնական:

Այս հսկայական թղթածրարը, որ, ցայսօր, ՀԱՄԱՅՆ հայ ժողովուրդին զերմտահոգութիւններէն է, եթէ պիտի շարժի, շարժուի ու շարժեցուի, ի շարս այլոց, ունի նաեւ գլխաւոր ճամբայ մը, որն է՝

## ՈՊՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԸ ԿԱՆՉԻ ՈՒ ԼՍՈՒՄԻ ՀՐԱԻՐԵԼ, ՈՐՈՎԻԵՏԵՆ՝

Անպայման հոն եւ իր մօտ «բան մը» կայ, արժանի համապատասխան ուշադրութեան ու նկատողութեան:

Բայց, մենք ինչի մասին կը խօսինք, կ'երազե՞նք:

Քոչարեանը, իր ազատագրական պայքարը մոռցած, իր հայրենի Արցախը շրջանցած, իր ակունքները անտեսած, հայաստանեան իր վիթխարի գործարարութիւններն ու առեւտրականութիւնները «կտակ»ելով իր որդւոյն, շունչը առած է Լ.Ա., անցնելով Ֆրանսայի ու Սպանիոյ իր դղեակային աշխարհէն:

Յամենայն դէպս, շատեր պիտի մտածեն թէ՛ իր գիտնալիքն է, իր գործը: Գիշը է, բայց, երբ որ համահայկական, համազգային ու համապետական ԳԵՐԻՆԴԻՐ մը կայ հայ ժողովուրդին առջեւ, որուն մէջ ականատեսի եւ ունկնդիրի դերակատարութիւն մը ունեցած է Պրն. Քոչարեանը, առաւել՝ նախագահական իր համեստ «ռոճիկ»ներով հասած է... լեռնակուտակային դիզումներու, ժամն է որ, ամէն ոք պատասխանատուութեան հրաւիրուի:

Հայ ժողովուրդը այլեւս պէտք է գիտնայ, թէ Նայիրին եւ իր խմբակը, որո՞ւն դրդումով, հրահանգով ու դաւադրութեամբ, կազմակերպեցին խորհրդարանական արշաւանքը, իսկ յատենի Պրն. նախագահը ՊԱՐՏԱԻՌՈՒԾ է լուսաբանելու, փոխանակ՝ արտահայաստանեան «մարզումներու եւ որսորդութիւններու ետեւէն վազելու:

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2017 թ. դեկտեմբերի 12-ին Ռամկավար Ազատական Կուսակցության գրադարան-ընթերցարանում տեղի ունեցավ կյոթ սեղան-քննարկում նվիրված Մեծ հայրենադարձության 70-ամյակին: Քննարկմանը ներկա էին մայր եկեղեցու, մտավորականության և ԶԼՄ-ների մեծ թվով ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին ՌԱԿ ատենապետ Հակոբ Ավետիսյանը կյոթ սեղանը վարելու համար ձայնը տվեց պգո Սուրեն Սարգսյանին: Ողջունելով և շնորհակալություն հայտնելով ներկաներին հրավերն ընդունելու և մասնակցության համար՝ Ս. Սարգսյանը պատճառաբանեց 70-ամյակի հանգամանքը, նշելով, որ թեև հիմնախնդրի վերաբերյալ առկա են զգալի թվով ուսումնասիրություններ, սակայն դեռևս կան բազմաթիվ հարցեր, որոնք կարող են և սպասում են իրենց լուսաբանմանը:

Այս վարողը ելույթի հրավիրեց գլխավոր զեկուցող, ԵՊՀ Մփյուռքի պատմության ամբիոնի վարիչ, պգո Արման Եղիազարյանին: Հիմնախնդրի բոլոր ծայրերին քաջատեղյակ զեկուցողը ներկայացրեց հայրենադարձության եզրույթի էությունը և պարզաբանեց դրա հետ շաղկապված մեծ թվով խնդիրներ: Այնուհետև զեկուցողին ուղղվեցին բազմաթիվ հարցեր, որոնք ստացան սպառիչ պատասխաններ: Ծավալվեց նաև մտքերի աշխույժ փոխանակություն, որոնց ընթացքում հրավիրյալներն իրենց մասնագիտական տեսանկյուններից արժեքավոր դիտարկումներ կատարեցին և հանդես եկան հետաքրքիր առաջարկություններով:

Վերջում ամփոփելով քննարկումները Ս. Սարգսյանը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց ներկաներին ակտիվ ու սրտացավ մասնակցության համար և ավելացրեց, այս գործընթացը ցույց տվեց, որ նման միջոցառումներն անկասկած անհրաժեշտ են, ուստի կաշխատենք նմանատիպ քննարկումներ ապագայում ևս պարբերաբար կազմակերպել:

### Ժամանակն է Քոնկրետին Մեջ Ցեղասպանության Ճանաչման Հարցը Բարձրացնելու. Պիլիբաքիս

ՌԱՄԻՆԿԻՍՏԻՆ, «Ամերիկայի Չայն».- Քոնկրետական Կաս Պիլիբաքիս անգամ մը եւս ընդգծեց Հայոց Ցեղասպանութեան ճանաչման կարեւորութիւնը՝ Քոնկրետի մակարդակով:



«Հակառակ Թուրքիոյ ուրացման փորձերուն, ցարդ Հայոց Ցեղասպանութիւնը կը ճանչնան Միացեալ Նահանգներու 50 նահանգներէն 48ն եւ մեծ թիւով եւրոպական երկիրներ», ըսած է ան աւելցնելով, որ Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչած է նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Ռանըլտ Ռեկընը 1981ին, եւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տունը՝ 1975ին, 1984ին եւ 1996ին:

Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւին ակնարկելով՝ Պիլիբաքիս ըսած է. «Կը կարծեմ, որ բանաձեւը կրնայ վաւերացուիլ: Մենք անիկա կը քննարկենք մեր ղեկավարներուն հետ: Անիկա նախ պէտք է վաւերացուի Արտաքին յարաբերութիւններու յանձնախումբին կողմէ, որմէ ետք մենք Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը Ներկայացուցիչներու տան օրակարգ կը մտցնենք»:

### ՀՀ կառավարութիւնը պիտի շարունակէ աջակցութիւն տրամադրել սահմանամերձ համայնքներուն

Հայաստանի կառավարութիւնը յառաջիկայ տարիներուն պիտի շարունակէ ընկերային աջակցութիւն տրամադրել սահմանամերձ համայնքներուն:

Խորհրդարանը, ըստ Armenpress.am-ի, երկրորդ ընթերցումով եւ ամբողջութեամբ ընդունեց «Սահմանամերձ համայնքներու ընկերային աջակցութեան մասին» ՀՀ օրէնքին մէջ փոփոխութիւններ կատարելու մասին օրէնքին նախագիծը:

Նախագիծով կ'առաջարկուի սահմանամերձ համայնքներու ընկերային աջակցութեան մասին օրէնքի գործողութեան ժամկետը 2018-էն երկարաձգել մինչեւ 2021:

«Սահմանամերձ համայնքներու ընկերային աջակցութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքը ընդունուած է 2014-ին: Սահմանամերձ համայնքներու բնակիչներուն աջակցութիւնը կը տրամադրուի բնական կազի, էլեկտրականութեան, ոռոգման ջուրի՝ մասնակի եւ հողի հարկի ու գոյքահարկի ամբողջութեամբ փոխհատուցման ձեւով:

### Եսիր Լաբիտ. «Հայոց Ցեղասպանութեան Ժամանակ փոքրիկներու սպանողը հերքող Էրտողանը չի կրնար դասեր տալ Իսրայէլին»

Իսրայէլական Yesh Atid կուսակցութեան առաջնորդ Եսիր Լաբիտը յայտարարած է, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանը, որ կը ժխտէ Հայոց Ցեղասպանութեան ընթացքին փոքրիկներու սպանութեան փաստը, չի կրնար դասեր տալ Իսրայէլին:



Ըստ Armenpress.am-ի՝ այս մասին կուսակցութեան առաջնորդը գրած է Twitter-ի իր էջին:

Նշեալ արձանագրութիւնը յաջորդած է Էրտողանի յայտարարութեան, որուն մէջ ան Իսրայէլը անուանած էր «ահաբեկչական պետութիւն»:

«Թուրքիոյ նախագահ Էրտողանը Իսրայէլը կ'անուանէ «ահաբեկչական պետութիւն, որ կը սպաննէ փոքրիկները»: Այն անձը, որ կը հերքէ Հայոց Ցեղասպանութեան ընթացքին փոքրիկներու սպանողը, մեզի դասեր տալու իրաւունք չունի», - գրած է Լաբիտ:

Վերջինս, այս տարուան Յուլիսին, դիմած էր Իսրայէլի ղեկավարութեան՝ յորդորելով պաշտօնապէս ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը:

### Եւրոպական խորհուրդի նախարարներու կոմիտէն սկսաւ Ատրպէյճանի անդամակցութեան կասեցման գործընթացին

Եւրոպական խորհուրդի նախարարներու կոմիտէն 6 Դեկտեմբերին յարուցած է նախադէպ չունեցող դատական քննութիւն Ատրպէյճանի կողմէ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին արձակած վճիռը չկատարելու վերաբերեալ: «Արմէնփրէս» կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Արփինէ Յովհաննիսեան:



«Նախապէս որեւէ պետութեան վերաբերեալ նախարարներու կոմիտէն այդպիսի որոշում չէ տուած: Յիշեցնեմ, որ գործը կը վերաբերէր ատրպէյճանցի յայտնի ընդդիմադիր Իլկար Մամետովի ապօրինի դատապարտման: 2014 թուականէն սկսեալ թէ՛ նախարարներու կոմիտէն, թէ՛ Խորհրդարանական վեհաժողովը բազմիցս որդեգրած են որոշումներ ու բանաձեւեր՝ կոչ ուղղելով ատրպէյճանական իշխանութիւններուն ազատ արձակելու Մամետովը, սակայն Մարդկային իրաւանց եւրոպական դատարանի վճիռէն երեք տարի ետք ալ Մամետով կը շարունակէր մնալ անազատութեան մէջ», ընդգծած է Յովհաննիսեան:

Ան նշած է, որ առաջին անգամ Ատրպէյճանի դէմ այս աննախադէպ ներգործութեան միջոցը կիրարկելու վերաբերեալ մտադրութիւնները հնչեցուած են այս աշնան: «Ատրպէյճան զգուշացուած էր, որ եթէ մինչեւ 29 Նոյեմբեր չկատարէ Մարդկային իրաւանց եւրոպական դատարանի որոշումը, իր նկատմամբ պիտի սկսի քննութիւնը Մարդկային իրաւանց եւրոպական դատարանի Մեծ պալատին մէջ, սակայն նոյնիսկ բազմաթիւ զգուշացումներու պարագային ատրպէյճանական իշխանութիւնները նախընտրեցին հնչեցնել կեղծ մեղադրանքներ, քան գործադրել Մարդկային իրաւանց եւրոպական դատարանին որոշումը», ըսած է Ազգային ժողովի փոխնախագահը:

ԱՄԷՆ ԳՆՈՎ ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆՈՒԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉԱՒԱԿՆԵՐՈՒ ԱՐԵԱՄԲ ՉԵՈՔ ԲԵՐՈՒԱԾԸ

### Մեղրիի ազատ տնտեսական գոտիին մէջ պիտի իրականացուին 130-150 միլիոն տոլարի ներդրումներ



Կառավարութիւնը հաւանութիւն տուաւ Միւնիքի մարզի Մեղրի համայնքին մէջ ազատ տնտեսական գոտի ստեղծելու, «Մեղրի ազատ տնտեսական գոտի» փակ բաժնետիրական ընկերութիւնը ազատ տնտեսական գոտիի կազմակերպիչ ճանչնալու, ինչպէս նաեւ ազատ տնտեսական գոտիի գործունէութեան վերաբերեալ կազմակերպիչին կողմէ ներկայացուող հաշուետուութեան ձեւերը հաստատելու մասին նախագիծին:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներու նախարար Սուրէն Կարայեան նշած է, որ ազատ տնտեսական գոտիին նպատակն է օտարերկրեայ ուղղակի ներդրումներու ներգրաւումը, երկրի ներդրումային գրաւչութեան բարձրացումը, արտահանման ուղղուածութիւն ունեցող գործունէութեան խթանումը, արտահանման ծաւալներու աւելացումը, նոր աշխատատեղերու ստեղծումն ու կայուն տնտեսական զարգացման խթանումը:

«Ազատ տնտեսական գոտիի գործառնական տեսակը կը սահմանուի որպէս արտադրարդիւնաբերական եւ համեմատական՝ գիւղատնտեսութեան, մշակող արդիւնաբերութեան, էլեկտրականութեան մատակարարման, մեծածախ առևտուրի, փոխադրումներու եւ պահեստային տնտեսութեան, մասնագիտական եւ տեխնիկական գործունէութեան, մշակոյթի, զուարճութիւններու եւ հանգիստի ոլորտներուն մէջ»,- «Արմենփրես»-ի փոխանցմամբ, ըսած է Կարայեան:

Անոր խօսքով, ազատ տնտեսական գոտին պիտի զարգանայ երկու փուլով՝ աւարտական փուլին ունենալով 70 հեքթար տարածք: «Գոտիի գործունէութեան արդիւնքով առաջիկայ տարիներուն կը նախատեսուի ներգրաւել 50-70 շահագործող կազմակերպութիւններ, որոնք պիտի իրականացնեն 130-150 միլիոն տոլարի ներդրումներ, պիտի ստեղծուի շուրջ 1500 նոր աշխատատեղ: Արտահանման ծաւալները պիտի կազմեն 350 միլիոն տոլար»,- ըսած է նախարարը:

Կարչապետ Կարէն Կարապետեանի հարցին ի պատասխան՝ Կարայեան նշած է, որ Դեկտեմբեր 15-ին տեղի պիտի ունենայ բացումը ազատ տնտեսական գոտիին, որու գործունէութեան ժամկետը 50 տարի է:

Կակնկալով, որ Միւնիքի մարզին մէջ ազատ տնտեսական գոտու գործունէութեան մեկնարկը պիտի նպաստէ Հայաստանի մէջ ներդրումներու, միջազգային ընկերութիւններու ներգրաւման, արտահանման խթանման, ԵԱՏՄ, ԵՍ, ԻԻՀ եւ Մերձաւոր Արեւելքի շուկաներուն մէջ հայկական արտադրանքի ճանաչման ու տարածման, ինչպէս նաեւ նոր աշխատատեղերու ստեղծման:

Օրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարութեան կողմէ հիմնադրուած է «Մեղրի Ազատ Տնտեսական Գոտի» փակ բաժնետիրական ընկերութիւնը:

Ընկերութեան 100 տոկոս բաժնետոմսերու փաթեթը կը տնօրինուի «Համահայկական ֆոնտ» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնտին կողմէ:



### ՄԱՏՏԻՏ ՍՈԼՈՏՖԱԻՐԻԿԻ ՕՄԱԸԱ

Սոլոտֆայրիկ թիմը մասնակցեցաւ «Մասսիս»-ի կողմէ կազմակերպուող մարտնչական մրցումներին: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ:

Սոլոտֆայրիկ թիմը մասնակցեցաւ «Մասսիս»-ի կողմէ կազմակերպուող մարտնչական մրցումներին: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ:

- Սոլոտֆայրիկ թիմը մասնակցեցաւ «Մասսիս»-ի կողմէ կազմակերպուող մարտնչական մրցումներին: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ:

### ՏՄԱԼՈՂՈՑ ԳՈՆԵՐՈՆ ԿԱԻ ԿԻԷՄՈՆՈՆ ԱՐՏԱԿԻ ԿԱԼՓԱԿԻԱՆ

Միւրեմի ծնողք,

Ա. Գալիպարեան վարժարանի ծնողաց մարմինը, շնորհակալութիւն կը յայտնէ ձեր բոլորին ջերմ եւ ուրախ ներկայութեան Կիրակնօրեայ մեր երեկոներուն: Մեր հանդիպումները պիտի վերահաստատուին Նոր Տարին վերջ, նորանոր գուարթ անակնկալներով:

Նաեւ այս առիթով տեղեակ կը պահենք որ Շարաթ -Կիրակի 16 եւ 17/12/2017 դպրոցի երեխաները պիտի այցելեն ձեր տունները, երգելու ՍՈՒՐՔ ՕՆՆԴԵՍԸ ԵՐԳԵՐ- CAROL եւ մաղթելու Ամանօրեայ շնորհատրամբներ բոլորին:

Կը մաղթենք ձեզի ուրախ եւ առողջ Տօնական Օրեր: 2018-ը լաւագոյնը բերէ ձեզի եւ ձեր ընտանիքներուն:

Այապետներ,

Օ Տնտեսական Գոնեւր & Կիւմոնոն տի իւրիւր, ձեր շնորհակալութիւն կը յայտնէ ձեր մասնակցութեամբ մրցումներին: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ:

Սոլոտֆայրիկ թիմը մասնակցեցաւ «Մասսիս»-ի կողմէ կազմակերպուող մարտնչական մրցումներին: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ: Իր մասնակցութեամբ մրցումները անցան հաջողակ:

Ձեր սիրով ձեր մաղթները, Կրթութիւն, Կրթութիւն & Երջիւր: 2018-ը լաւագոյնը բերէ ձեզի եւ ձեր ընտանիքներուն:

### Տիւրի սպանութեան գործով հինգ կասկածեալ ազատ արձակելու մասին որոշում ընդունուած է

Պոլսոյ «Ալոս» թերթի նախկին գլխաւոր խմբագիր Հրանդ Տիւրի սպանութեան գործով Դեկտեմբեր 8-ին կայացած դատական նիստին որոշում տրուած է 5 կասկածեալ ազատ արձակելու վերաբերեալ: Ինչպէս կը հաղորդէ «Արմենփրես»-ը, այս մասին կը յայտնէ թրքական NTV-ն:

Յայտնի է, որ ազատ արձակուածները՝ Պեքիր Եորուշը, Էջելիթ Էմիրը, Էմրէ Ջիւրթոզը, Հաջը Շերիֆ Շիւշեքը եւ Շերիֆ Աթէշը, սպանութեան ժամանակ Պոլսոյ ուստիկանութեան հրամանատարութեան աշխատակիցներ եղած են: Պոլսոյ ծանր յանցագործութիւնները քննող 14-րդ դատարանին մէջ կայացած դատական նիստի ընթացքին արձանագրուած է, որ որոշ տեսաձայնագրութիւններու մէջ կը բացակայի կասկածեալներու յստակ նշանականացումը:

Յիշենք, որ Հրանդ Տիւրը սպանուած է 2007 թուականի Յունուար 19-ին՝ խմբագրութեան առջեւ անոր վրայ կատարուած զինուած յարձակման հետեւանքով:

**ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ  
ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՓԵՐԻՍԹԵՐԻԻ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԵՋ**

**Ուրբաթ 5 Յունուար 2018**  
Երեկոյեան Ժամերգութիւն,  
Ժամը 18:00--ին  
Ճրագալոյցի Սուրբ Պատարագ,  
Ժամը 19:00-ին

**Շաբաթ 6 Յունուար 2018**  
Սուրբ Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն  
Սուրբ Ծննդեան Պատարագ,  
Ժամը 10:00-ին,  
Ջրօրհնէք Ժամը 11:30-ին

**Կիրակի 7 Յունուար 2018**  
Մեռելոց Յիշատակ  
Հոգեհանգստեան կարգ  
Ժամը 11:00-ին

**ԱՄԱՆՈՐԻ ՌԻՐԱՆ ԵՐԵԿՈ**

Հունահայոց Թեմի  
Երիտասարդաց  
Միութիւնը Թեմական  
Խորհրդի  
հովանավորությամբ  
կազմակերպում է  
Ամանորյա ուրախ  
երեկո, որը տեղի պիտի  
ունենա **TERRA VERDE**  
(7ης ΜΑΡΤΙΟΥ 1944, 49 ΝΙΚΑΙΑ) հանդիսասրահում  
դեկտեմբեր 31-ին ժամը 22:00-ից:



Երեկոյին իր մասնակցությունն է բերելու  
Հայաստանից ժամանած հայտնի երգիչ՝ **Արտաշես**  
(**TYUSH**) **Ասլանյանը:**

Տեղեր ապահովելու համար կարող եք  
զանգահարել  
6987675444 Պետրոս  
6937678062 Արմինե

**Կարկանդակի բաշխում**

Արարատ Մ.Ս.Միութեան  
Տիկնանց մարմինը սիրով կը  
հրաւիրէ Ձեր բոլորին  
կարկանդակի բաշխումի որ  
տեղի պիտի ունենայ՝



**Չորեքշաբթի, 17  
Յունուար 2018-ին  
Երեկոյեան ժամը  
6.30-ին**

Հ.Բ.Ը.Մ.-ԱՐԱՐԱՏ կեդրոնի «Անանիա եւ Վարդուհի  
Խաչատուրեան» սրահին մէջ:

**Շնորհակալիք**

Հունահայոց Թեմական  
Խորհուրդը շնորհա-  
կալություն է հայտնում  
գաղութային կառույցներին  
ու անհատներին ովքեր  
ջանք չինայեցին օգնելու  
Ամանորի բազարի կայա-  
նալուն: Աստված օրհնի  
ամենքիդ:

*Շնորհակալություն*

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀ  
ԱԶԳԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Մեփականութիւն  
ԱՐԱՐԱՏ Մ Մ ՄԻՈՒԹԻՒՆ  
Միսթու 33, Նիքեա, Յունաստան

Համակարգչային  
շարուածքը եւ էջադրումը՝  
ՆՈՐ ԱՇԽԱՐՀ շաբաթաթերթի

Տնօրէն՝  
Ընկ. Սարգիս Խաչատուրեան

Արտօնատէր -  
Փաստաբան՝  
ընկ. Յակոբ Տէսճեան

“NOR AΣXAP”  
Αρμένικη Εβδομαδιαία  
Εφημερίδα  
Ιδιοκτησία “ΑΡΑΡΑΤ”  
Φιλολογικό Αθλητικό Σωματείο

Διευθυντής  
Σαρκίς Χατσατουριάν  
Εκδότης -  
Ιάκωβος Φετζιάν Δικηγόρος

Σηστού 33 - TK 18450 - Νίκαια  
Τηλ: 210-4926085

“NOR ASHKHAR”  
Armenian Cultural Social Weekly  
33 Sistou Str.  
GR 18450 NIKEA GREECE  
Tel-Fax: 00+30+210-4926085

**Գրատուած Օրեր**

**4 Փետրուար 2018,  
11 Փետրուար 2018  
(Պազար)  
24-25 Փետրուար 2018  
(Թատերական)**

Արարատ  
Մ.Ս.Միութիւն



**Նուիրատուութիւն**

Ազատուհի Ռուստէմեանի մահուան առթիւ՝ Տիկին Ռոզինա  
Տամադեան Հ.Բ.Ը.Մ. «Ա. Գալփաքեան» վարժարանի երկու  
դպրոցական ինքնաշարժները փոխարինելու նպատակով 30 եւրո կը  
նուրբ:

XXX  
Հ.Բ.Ը.Մ. «Ա. Գալփաքեան» վարժարանի երկու դպրոցական  
ինքնաշարժները փոխարինելու նպատակով իրենց մօր՝ Ազատուհի  
Ռուստէմեանի մահուան առթիւ կը նուիրեն՝  
-Պրն.Գալուստ Ռուստէմեան 100 եւրո  
-Տիկ. Անի Ռուստէմեան 100 եւրո

**Նուիրատուութիւն**

Ազատուհի Ռուստէմեանի մահուան տխուր առթիւ  
Տիկ. Լուսի Խաչատուրեան 50 եւրո կը նուիրէ Փերիսթերիի  
Ս. Աստուածածին եկեղեցոյ

նոյնպէս՝

Նիքիթա Տէրոթորովոյի մահուան տխուր առթիւ 50 եւրո:

**Կարդացէք**

ու

տարածեցէք

**"Նոր Աշխարհ"**

շաբաթաթերթը

Բացի խմբագրականներէն,  
յօղուածագիրներու տեսակէտ-  
ներն ու գաղափարները անպայ-  
մանօրէն չեն արտայայտեր թեր-  
թին ուղեգիծը:

### Հայկ Նահապետեն Մինչև Քառորեայ Պատերազմի Հերոսներ. Ընթերցասերներու Դատին Յանձնուեցաւ «Հերոսապատում» Գիրքը

Բանաստեղծ, լրագրող, իմբազիր Սամուէլ Մարգարեանի հայրենասիրական թեմայով գրուած «Հերոսապատում» գիրքի պոէմներն ու բանաստեղծութիւնները կ'անդրադառնան Արցախի, Հայոց բանակի, Հայոց դատի նուիրեալներուն:



Ըստ «Armenpress.am»-ի գիրքին շնորհանդէսը տեղի ունեցած է Դեկտեմբեր 5-ին Հայաստանի գրողներու միութեան տան մէջ:

«Գիրքին մէջ զետեղուած են հեղինակի տարբեր տարիներու ստեղծագործութիւնները: Յատկապէս ընդգծուած են արցախեան պատերազմի հերոսամարտի եւ զոհուած եւ կենդանի հերոսներու մասին գործերը: Կայ անդրադարձ Մարդարապատի ճակատամարտին, ապրիլեան քառորեայ պատերազմին», - նշած է Հայաստանի գրողներու միութեան նախագահ Էդուարդ Միլիտոնեանը: Ան նաեւ ըսած է, որ պոէզիան ինքնին զինուոր է մարտադաշտի մէջ:

Գրականագէտ Պետրոս Տէմիրճեանի խօսքով՝ Սամուէլ Մարգարեանը իր տպագրած առաջին գիրքէն մինչև «Հերոսապատում» ժողովածուն հաւատարիմ մնացած է այն թեմաներուն, որոնք միշտ առկայ եղած են իր ստեղծագործութիւններուն մէջ:

«Անոնք են հայրենիքը, հերոսները, հայոց պատմութիւնը, քաղաքները, ի վերջոյ սերը ոչ միայն հայրենիքի, այլև կնոջ, սիրած աղջկան եւ աշխարհի նկատմամբ», - ըսած է Տէմիրճեանը:

«Ապրելով այս հողին վրայ՝ մենք երբեք չենք մոռնար յանուն հայրենիքի արիւն թափած հերոսները: Այս ժողովածուին մէջ անդրադարձած են Հայկ Նահապետեն մինչև ապրիլեան պատերազմի հերոսները, փորձած են դէպքերն ու իրադարձութիւնները զեղարուեստորէն, բանաստեղծական ձևով ներկայացնել: Հնարաւոր չեղաւ բոլորին մասին մէկ գիրքի մէջ գրել, հետեւաբար անկալ շարունակութիւն պիտի ունենայ», - շեշտած է գիրքի հեղինակ Սամուէլ Մարգարեանը: Ան ընդգծած է, որ հայ ժողովուրդը իր ողջ պատմութեան ընթացքին ունեցած է քաջութեան բազում էջեր, սակայն իրեն համար վճռական, ճակատագրական սխրանքները Աւարայրի, Մարդարապատի հերոսամարտերն են եւ Արցախի ազատագրումը:

Շնորհանդէսին ներկայ եղած են ինչպէս գրողներ, այնպէս ալ Արցախի ազատագրման մասնակցած հերոսներ եւ քառորեայ պատերազմին զոհուած զինուորներու ծնողներ:

Նշենք, որ Սամուէլ Մարգարեանը ծնած է 1952-ին Ախուրեանի շրջանի Երազգաւորս գիւղին մէջ: Աւարտած է ԵՊՀ բանասիրական բաժանմունքը: «Շիրակ» թերթի իմբազիրն է: Հրատարակած է բանաստեղծական 21 ժողովածու: Անոր գործերը թարգմանուած են ռուսերէն, վրացերէն, անգլերէն, ուքրաերէն: Յայտնի գիրքերն են «Արբազան լեռնաշխարհ»-ը, «Աշխարհի հուրիներին»-ը, «Մեղրագետ»-ը, «Երազգաւորս»-ը:

### Հայկական Քոչարին՝ ԵՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ Նիւթական Ժառանգութեան Ցանկին Մէջ

Հայկական քոչարին ընդգրկուած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ: Այս մասին կը յայտնէ կազմակերպութեան Twitter-ի պաշտօնական էջը:



Քոչարի պարը հայկական ոչ նիւթական մշակութային ժառանգութեան բնութագրական դրսեւորումներէն է եւ տարածուած է Հայաստանի Հանրապետութեան ողջ տարածքին ու հայկական սփիւրքի մէջ: ԵՈՒՆԵՍԿՕ-ի մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան պահպանութեան հարցերով միջկառավարական յանձնաժողովի ամենամեայ նստաշրջանը տեղի կ'ունենայ Դեկտեմբեր 4-9 Հարաւային Քորէայի Չեջոնո կղզիին վրայ:

Արդրբեջանէն ներկայացուած տոլմա ճաշատեսակի պատրաստման բաղադրատոմսը նոյնպէս ընդգրկուած է ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ցանկին մէջ:

### Մերգէլ Փարաջանովի, Լեւոնիդ Ազգալդեանի եւ Մոնթէ Մելքոնեանի պատուին փողոցներ պիտի անուանակոչուին

Երեւան քաղաքի կեդրոն վարչական շրջանի Մարալանջի փողոցէն մինչև Լեւ Կամարի փողոցը ինկած ճանապարհահատուածը պիտի անուանակոչուի Լեւոնիդ Ազգալդեանի անունով:



Երեւանի աւագանին 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստում 41 կողմ, 11 դէմ ձայներու յարաբերակցութեամբ հաստատեց որոշումը: Նախագիծին դէմ քուէարկեցին «Ելք» խմբակցութեան ներկայացուցիչները, որոնք հանդէս եկան Երեւանի Լենինգրադեան փողոցը Ազգալդեանի անուան փողոց անուանափոխելու առաջարկով, սակայն քուէարկութեամբ առաջարկը մերժուեցաւ:

Իսկ Երեւան քաղաքի Կեդրոն վարչական շրջանի Իսրայէլեան փողոցէն մինչև Հրազդանի կիրճ ինկած հատուածը՝ Մերգէլ Փարաջանովի թանգարանի յարակից փողոցը, պիտի անուանակոչուի նշանաւոր բեմադրիչին պատուին:

Երեւան քաղաքի Իսակովի պողոտան Լենինգրատեան փողոցին կապող ճանապարհահատուածը պիտի անուանակոչուի Մոնթէ Մելքոնեանի անունով:

Երեւան քաղաքի աւագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստին աւագանիի Հանրապետական եւ «Ելք» խմբակցութեան անդամները կողմ քուէարկեցին նախագիծին: «Մէկ տարիէ աւելի այս հարցը կը քննարկուի: Մենք յետագային ճարտարապետներու հետ ճանապարհահատուածը այնպիսի շէնքերով պէտք է կառուցապատենք, որ փողոցին եւ անուանը վայել ըլլայ», - ըսած է Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեանը:

### Հայ Պատանին Կենցաղը Հեշտացնող Մարդ-մեքենայ Ստեղծած է

11-ամեայ Դաիթ Պաղտասարեանը մարդ-մեքենայի (robot) շինութեամբ կը հետաքրքրուի արդէն քանի մը տարիէ: Անոր ստեղծած դեռ միակ տարբեր աշխատանքներ կատարող մարդ-մեքենան կրնայ վերցնել, տեղափոխել եւ տեղադրել առարկաները, ինչպէս նաեւ կարդալ եւ հարցերու պատասխանել: Ան ունի նաեւ տեսախցիկ:



PanARMENIAN.Net-ին Դաիթը պատմած է, որ մարդոց կենցաղը հեշտացնող մարդ-մեքենայ ստեղծելու մասին շատոնց է ի վեր կ'երազէր:

«Մարդ-մեքենայ ստեղծելու բազմաթիւ գաղափարներ յառաջացան «Ադուէս» ծրագիրը ստեղծելու ընթացքին, եւ ես որոշեցի որքան հնարաւոր է շատ բան իմանալ այս բնագաւառի մասին», - ըսած է ան:

Դաիթը տարբեր աշխատանքներ կատարող մարդ-մեքենան պատրաստած է նախապէս իր սարքած քանի մը այլ մարդ-մեքենաներու համադրութեամբ: «Երկու ամսուան մէջ պատրաստած եմ մարդ-մեքենան՝ Arduino IDE եւ Snap4arduino ծրագիրներու միջոցով», - ըսած է ան:

Պատանին մտադիր է կատարելագործուիլ մարդ-մեքենաշինութեան բնագաւառին մէջ: Այժմ ան կը պատրաստուի բերք հաւաքող մեքենայ ստեղծելու:

